




Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

ԿԱՆՈՆԱԲՈՐ ՀՈՎԵՐ.



— ր հովերն են որ անփոփոխ
ընթացք ունին.

— Գլխաւորներն ասոնք են.

Նախ՝ տարեկան հովերն որ բո-
լոր տարին կիչեն արեւելքէն արեւ-
մուտք, արեւուն գիմացի կողմը գլու-
նուած արեւադարձին մէջ:

Երկրորդ, վեցամսեայ հովերն որ վեց վեց
ամիս կիչեն, ոմանք ապրիլէն մինչեւ հոկ-
տեմբեր, եւ ոմանք հոկտեմբերէն մինչեւ
ապրիլ:

Երրորդ, բարակ հովեր, որ ծովեզերեայ
տեղուանք միայն կիչեն:

Տարեկան հովերը շիտակ արեւելքէն ա-
րեւմուտք կիչեն.

— Ոչ. հիւսիսային կիսագնդին վրայ հիւ-
սիսային արեւելքէն կիչեն, իսկ հարաւայ-
ին կիսագնդին վրայ հարաւային արեւելքէն:
Քանի որ հասարակածին մօտենաւ՝ այնչափ
այս հովերուն ոյժը կապակի:

Տարեկան հովերուն պատճառն ինչ է.

— Այրեցած գօտիին մէջ՝ գետնին երե-
սին մօտ եղած օդը տաքնալով վեր կենէ,
եւ անոր տեղը կըռնէ ուրիշ հոսանք մը որ բե-
ւեռներէն կուգայ՝ միջօրէականներուն շրտ-
կութեամբը:

Թէ որ տարեկան հովերը բեւեռներէն
կուգան, ինչո՞ւ համար իրենց ընթացքը ճիշդ
հիւսիսային կամ հարաւային չէ.

— Վասն զի այն բեւեռային հոսանքները մասնակցութիւն ունին երկրագնդին թաւալմանը հետ, որ արեւմուտքէն արեւելք կը դառնայ. բայց որովհետեւ երկրագնդին շարժմանը օգոյ հոսանաց ընթացքէն աւելի արագ է, այնպէս կերեւնայ որ իբր թէ անոնք դէպի ներհակ կողմը կիչեն, այսինքն արեւելքէն արեւմուտք:

Նոյնպէս կերեւնայ որ իբր թէ ծառերն ու շէնքերը դէպի ետեւ կեթան՝ երբոր մէկը կառք մը մտած՝ շուտ շուտ առաջ կվազէ:

Հասարակածին տաք օդը երբ բարձրանայ՝ ինչ ընթացք կըռնէ:

— Դէպի բեւեռները կվազէ՝ որպէս զի վարի հոսանքներով այն կողմերէն եկած օդուն տեղը բռնէ. ասով կիմացուի թէ երկու հոսանք կայ բեւեռներուն ու հասարակածին մէջտեղը. — մէկը վարի հոսանքն է՝ որ բեւեռներէն դէպի հասարակածը կվազէ. մէկալը վերի հոսանք՝ որ հասարակածէն դէպի բեւեռները կգիմէ:

Տարեկան հովերը բոլոր տարին կիչեն թէ ոչ.

— Այո, հասարակածին երկու կողմէն երեսնական աստիճան հեռու. այն երկու հոսանքին մէջտեղն է խաղաղական օդը:

Արարչին բարութիւնն ու իմաստութիւնը ինչպէս կերեւնայ այս բանիս մէջ որ մըթնօրրոտի օգոյն՝ զուգակշռութեան մէջ մնալու յատկութիւնը տուեր է.

— Եթէ այրեցած գօտւոյն օդը բեւեռներուն պաղ հոսանքներովը չզովանար, այն տեղի տաքութիւնն այնպէս սաստիկ կլինէր որ մարդ չէր կրնար գիմանալ: Անոր ներհակ, թէ որ բեւեռային երկիրներուն ցրտութիւնը այրեցած գօտւոյն տաք հոսանքներովը չկակրկնար, այն տեղի ցուրտը անտանելի կլինէր:

Բեւեռային օգոյն այրեցած գօտւոյն օդին հետ խառնուիլը ուրիշ ինչ օգուտ ունի.

— Հասարակածին տակի երկիրներուն բոյսերը խիստ առատ լինելով՝ շատ մը թթուա-

ծին դուրս կուտան. նմանապէս բարեխառն երկիրներուն մէջ՝ կրակները, մարդիկ եւ կենդանիք շատ մը ածխային թթու դուրս կուտան: Այս երկու մթնոլորտներուն իրարու հետ խառնուելով՝ ամէն տեղ իրեն պէտք եղած կաղը կուենայ:

Տաք երկիրներու օգոյն պաղ երկիրներու օդին հետ խառնուիլը ինչ կերպով պատճառ կլինի ամէն երկրի իրեն պէտք եղած կաղն ունենալուն.

— Ասով որ հասարակածին տակն եղած երկիրներուն բոյսերը շատ ածխային թթու կուղեն, իսկ բեւեռներուն մօտ եղած երկիրներուն կենդանիները շատ թթուածնի կարօտ են:

Բեւեռային երկիրներէն փչած հոսանքները՝ հասարակածի բոյսերուն ածխային թթու կտանին. այրեցած գօտւոյն օդին հոսանքներն ալ թթուածին կաղ կտանին բարեխառն գօտիներուն տակի կենդանեաց:

Ծովային հովերը ինչ կերպով կսկսին փչել ծովեզերեայ տեղերուն վրայ.

— Ծովային հովը առաւօտեան իննին կամ տասնին ատենները կենէ սովորաբար, եւ քանի կերթայ կսաստկանայ՝ մինչեւ երեկոյեան երեքը. այն ատեն կսկսի իջնալ, ցամաքէն կսկսի բարակ հով մը փչել դէպի ծով եւ բոլոր գիշերը կտեւէ:

Ինչո՞ւ առողջարար է ծովային հովը.

— Վասն զի ծովուն երեսէն կանցնի, եւ մէջը վնասակար արտաշնչութիւններ չկան՝ ինչպէս որ կրնան գտնուիլ ցամաքային հովերուն մէջ. ուստի առողջութեան շատ օգուտ է՝ կէսօրէն առաջ ծովուն եզերքը պըտրտիլը:

Ծովային հովը ինչո՞ւ համար զով (սերմ) սալսրն է.

— Անոր համար որ ծովուն երեսը չկրնար այնչափ տաքնալ արեւէն՝ որչափ ցամաքը. ուստի ծովեզերքը կեցողին համար ծովային հովը աւելի զով կուգայ: